

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԿՐՈՒԹՅԱՆԸ

Հարգելի խմբագրություն

«Լրաբեր»-ի հասարակական գիտությունների» այս տարվա 3-րդ համարում կարդացի Պ. Մ. Մուրադյանի «Վրացերեն արձանագրությունները Հայաստանում» հոդվածը:

Ողջունելի է, որ վերջապես, ի թիվս Հայաստանում գտնվող օտարլեզվյա վիմական արձանագրությունների, ուսումնասիրվում է նաև վրացերենը:

Կարևոր գործ է. արժանի է խրախուսանքի, բայց պահանջում է բարեխիղճ վերաբերմունք և ճշտություն:

Սակայն, հոդվածը մեզ չբավարարեց ոչ միայն այն պատճառով, որ ընդհանրացնող վերնագրի տակ հրատարակված են մի քանի, այն էլ մեծ մասամբ որևէ կարևորություն չունեցող արձանագրություններ, այլև այն պատճառով, որ հեղինակը արձանագրություններ հրատարակելու հաստատուն սկզբունքներ չունի: Այսպես, օրինակ՝

Հոդվածի մեջ բերված արձանագրություններից ոչ մեկը լուսանկար չունի, հետևապես հեղինակի վերծանության ճշտությունը ստուգելու ոչ մի հնարավորություն չկա: Մի քանիսը գծագիր ընդօրինակություններ ունեն, իսկ մի քանիսը՝ ոչ: Զի որոշված անթվական արձանագրությունների մոտավոր ժամանակը, վրացերեն արձանագրությունների շարքում տեղ է գտել հայերեն մի անթվական նոր ժամանակների արձանագրություն:

Նշանակում է, Պ. Մուրադյանի արձանագրություն հրատարակելու մեթոդները հնացած են և այսօրվա իմաստով գիտական համարվել չեն կարող:

Հոդվածագիր Պ. Մուրադյանը, մեկից ավելի անգամ, հիշատակել է մեր «Հաղթատ» և «Սանահնի վանքը և նրա արձանագրությունները» գրքերը և աշխատել է ցույց տալ «մեր աչքից վրիպած» մի քանի արձանագրությունների գոյությունը Մանահնում և Հաղրատում: Այդ առթիվ նա հոգվածում գրել է.

«Թեև պրոֆ. Կ. Ղաֆադարյանը իր «Սանահնի վանքը և նրա արձանագրությունները» արժեքավոր մենագրության մեջ գրում է, թե «այժմ արձանագրություն հրատարակողից պահանջվում է. 1. Հավաքել բոլոր արձանագրություններն անխտիր, առանց որևէ գիր բաց թողնելու, որպեսզի օգտագործողը վստահ լինի, որ տեղում դրանից ավելի բան չկա» և նշում է, որ այդ սկզբունքով է առաջնորդվել ինքը, այնուամենայնիվ մի երկու արձանագրություն (տապանագիր) վրիպել է նրա ուշադրությունից» (էջ 40):

Այնուհետև հեղինակը մեջ է բերել մեր «աչքից վրիպած» երկու տապանագիր՝ Սանահնից՝ որոնք հոդվածագրի կարծիքով թեև «որևէ բացառիկ արժեք չեն ներկայացնում, բայց հետաքրքիր են իրենց երկլեզվայնությամբ» (էջ 40), երկուսն էլ 19-րդ դարի, «Թավադ և Մինրաշի Սողոմոն Արղուիթնցկի-Դուրդուկովի», որ մեռել է 1816 թ. 88-ամյա հասակում (ըստ հոդվածագրի 48-ամյա) և մյուսը նույն տոհմի Շիրոշ իշխանի, մեռած 28 տարեկան հասակում:

Ըստ հոդվածագրի, մեր աչքից վրիպել է նաև Հաղրատի մի այլ տապանագիր, Հաղրատ գյուղի մովրովի կնոջ գերեզմանաքարի վրա գրված, որ անժամանակ մեռել է ըստ հայերենի 1816 և ըստ վրացերենի 1812 թ.:

Այնուհետև հոդվածագիրն ափսոսանքով նշում է, «որ պրոֆ. Կ. Ղաֆադարյանի հրատարակությունից դուրս են մնացել ոչ քիչ թվով տապանագրեր, «այդ թվում և Արղուիթյաններին-Երկայնարագուկներին վերաբերողը» և լրացնելու համար մեր ձեռքը մեջ է բերում ինչ որ Քալիի 19-րդ դարին պատկանող հայերեն տապանագիրը, առանց իսկ մի բառ ասելու, թե այդ չափածո արձանագրությունը ի՞նչ ժամանակի գործ է, հին է թե՞ նոր և ինչ կապ ունի վրացերենի հետ:

Ընկեր Պ. Մուրադյանը պետք է քաջ գիտենար, որ մենք նպատակ չենք ունեցել 19-րդ դարի մովրովների կանանց կամ Արղուիթյանների տոհմի, մեծի և փոքրի ժամանակագիրը դառնալու:

Այդ, ինչպես նաև շատ այլ տապանագրեր ոչ թե վրիպել են մեր աչքից, այլ ժողովածուն չձանրաբեռնելու համար չենք հրատարակել:

Հոդվածագիրը մեր գիրքը քննադատելուց առաջ, պետք է նույն գրքի մեջ կարդացած լինե՞ր «Լուսնյալ տապալի տողերը»

«Տեղում կան 19-րդ և 20-րդ դարի բազմաթիվ արձանագրություններ, գլխավորապես տապանագրեր, որոնք մենք կարևոր չենք համարել վերցնել, որովհետև չենք ուզել մեր ժողովածուն ծանրարևոտել պատմության և մշակույթի համար կարևորություն չներկայացնող նյութերով և, կարծում ենք, 19-րդ դարի պատմությունը պետք է գրվի ոչ թե անձանոթ անձների խղճուկ տապանագրերի և մի քանի հիշատակությունների հիման վրա, այլ տպագիր և դիվանային ճոխ նյութերի ուսումնասիրությամբ, որոնցով այնքան հարուստ է այդ դարը» (Հաղբատ, Երևան, 1963 թ., էջ 109):

Նույն խնդրին են վերաբերում «Դիվան հայ վիմագրության» բազմահատոր աշխատության երկրորդ պրակում ընկ. Սեդրակ Բարխուդարյանի հետևյալ խոսքերը՝

«Մենք հավաքել և ամփոփել ենք սույն պրակի մեջ հնագույնից սկսած մինչև 17-րդ դարի վերջի բոլոր, և հետագա դարերից միայն ընտրովի արձանագրությունները» (Դիվան հայ վիմագրության, պրակ 2-րդ, Երևան, 1960 թ., էջ 6):

Նույն սկզբունքով ենք առաջնորդվել մենք մեր բոլոր աշխատությունները կազմելիս, միայն թե վերջին սահմանը մենք ընդունել ենք 18-րդ դարի վերջը, իսկ 19-րդ կամ 20-րդ դարերից մեջ ենք բերել միայն հին հուշարձանների նորոգության վերաբերողները, կամ այնպիսիները, որոնք իրենց բովանդակությամբ անխզելիորեն կապվում են հին ժամանակների հետ:

Ընկեր Մուրադյանի հողվածի մեջ կան շատածված որակումներ, Այսպես օրինակ. հողվածագիրը գրում է՝

«Որոշ բառերի չվերծանված կամ կուսկածելի մնալը հիմնականում պայմանավորված է տրվյալ մասի լեզված ու սակավ ընթեռնելի լինելով» (էջ 35):

Կամ՝

«Դավթի կամարակապ դուռն վերևի արձանագրություն: Գրված է հինգ երկար տողերով, սակայն տողերի սկզբի և վերջին մասերը, յուրաքանչյուրը մետրից ավելի երկարության, լեզվել են և այժմ տեղադրված կորած են» (էջ 37):

Մի այլ տեղում հողվածագիրն ավելի պարզ է արտահայտում իր միտքը: Նա գրում է՝

«Ամայությունն ու օտառ միջավայրը, անկասկած, արագացրել են շատ արձանագրություններն ու հուշարձանների կործանումը» (էջ 31):

Այստեղ եթե ակնարկը վերաբերում է Արևմտյան Հայաստանին, որտեղ իրոք ինչպես վրացական, այնպես էլ հայկական բոլոր հուշարձաններն անխնամ վիճակումն են, այդ դեպքում մենք համաձայն կլինենք հողվածագրի հետ: Բայց ընկ. Մուրադյանը ավելի անհիմն կերպով գրում է շարունակության վրա, որ «Տասնամյակներ առաջ, ինչպես տողերիս հեղինակին պատմել են որոշ կուրթանցիներ, վանքը հիմնովին ավերելու փորձ է արվել, որի հետևանքով խիստ վնասվել է, իսկ մականի շատ սրբատաշ քարեր տարվել են շինարարության մեջ օգտագործելու» (էջ 32):

Եթե հողվածագիրը մի քիչ ուշադիր դիտեր թեկուզ «Ազգագրական հանդես»-ում, 1901 թվա-
ձանին, Ե. Հալալյանի հրատարակած Հնեվանի լուսանկարը, այն ժամանակ կիմանար, որ վաղուց անդի թափված են եղել տաճարի և գավթի երեսապատ քարերը և կորել վրայի արձանագրությունները:

Շատ դեպքերում տապանաքարերը դիտավորյալ կերպով գետնին հավասար են դրել, որպեսզի անցորդները նրանց վրա կոխոտելով նեղեցյալն իր կատարած մեղքերի համար թողություն ստանա: Պարզ է, որ դրանից մաշվում են (և ոչ թե քերվում) նրանց վրայի գրերը, լինեն հայերեն թե վրացերեն միևնույն է:

Ընկ. Պ. Մուրադյանը, կրկնելով Ե. Հալալյանին, Հնեվան մենաստանի անունը բացատրել է իրեն հունաց վանք:

Սակայն ինչպես երևում է տաճարի և գավթի շինության վրացերեն արձանագրություններից, Հնեվանը նրա պաշտոնական անունը չէ, այլ երկար ժամանակ լքված ու ամայացած լինելու պատճառով Հնեվան են կոչել, իբրև հին վանք: Հավանաբար վանքի անվան հետ կապված վրացերեն ձևի (ძველი) բառը ძველი (վր. ձվելի — չրս) բառի հայերեն արտասանության ձևն է, որ այսօր էլ նկատելի է, երբ վրացերեն լավ չիմացող հայերը վրացերեն են խոսում: